ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝ Հրայր Եսայան, տնտեսական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ֆրանսիայի Հանրապետություն, 2024 թվականի ապրիլի 7-ից մինչև ապրիլի 14-ը

3. Հրավիրող կողմը.
Ֆրանսիական զարգացման գործակալություն

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).
Գյուղատնտեսության ու ջրային ոլորտների կառավարման ֆրանսիական մոդելին ծանոթություն

5. Քննարկված թեմաները

ա/ Ֆրանսիայում խմելու և ոռոգման ջրամատակարարման կառուցվածքին ծանոթություն,
բ/ Տեղական ինքնակառավարման մարմինների իրավունքներին ու պարտականություններին ծանոթություն
գ/ գյուղատնտեսական հողերի կառավարման (առք և վաճառք, վարձակալություն և այլն) մոդելին ծանոթություն,

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Այցելության ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ Ֆրանսիայի հարավային շրջաններում խմելու և ոռոգման ջրամատակարարման կազմակերպությունների, ջրօգտագործողների ընկերությունների, ջրամբարների կառավարմամբ զբաղվող կազմակերպությունների, ֆերմերային միավորումների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հետ: Քննարկվել են ծառայությունների սակագների, ֆինանսավորման, սուբսիդավորման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ թեմաների հետ կապված հարցեր:

Այցելության երկրորդ մասը տեղի է ունեցել Փարիզում և նվիրված էր ինստիտուցիոնալ համագործակության, ջրային և գյուղատնտեսական ոլորտի ֆինանսավորման, բաղաբականության և օրենսդրական հարցերին, ինչպես նաև

ֆրանսիական փորձի Հայաստանում կիրառման հնարավորությունների և տարբերակների քննարկմանը:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում չի իրականացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցելության ընթացքում ֆրանսիական փորձին վերաբերվող քննարկված թեմաները հնարավորություն են տալիս գնահատել Հայաստանում կիրառելու հնարավորությունը՝ այն դիտարկելով տեղական ինքնակառավարման մարմինների հզորացման և պետական կառավարման ապակենտրոնացման համատեքստում: Բացի այդ ծառայությունների սակագներին, ֆինանսավորմանը և սուբսիդավորմանը վերաբերվող հարցերը ևս կարող են օգտագործվել ֆինանսների նախարարության կողմից իրականացվող վերլուծությունների և դրանից բխող առաջարկությունների ներկայացման համար:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

16 ապրիլ 2024թ

Հրայր Եսայան